«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՑՈՒՑՉԻ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Կրտսեր դպրոցականի հաղորդակցական կարողությունների զարգացումը

Հետազոտող ուսուցիչ՝ Ցողիկ Ավագյան
անուն, ազգանուն

Խանջյանի Արմեն Բենիամինի Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց
դպրոց

Մենթոր ուսուցիչ՝ Արմինե Անտոնյան
անուն,ազգանուն

ԱՐՄԱՎԻՐ 2022

«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Նախաբան ---------- էջ 3
2. Գրականության ակնարկ ----------էջ 4
3. Գործնական համատեքստ ----------էջ 6
4. Եզրահանգումներ ----------էջ 16
5. Գրականության ցանկ ----------էջ 18

1.ՆԱԽԱԲԱՆ

«Ուսուցումը հաղորդակցումն է գիտելիք ու փորձ ունեցողների միջև…
Հաղորդակցումը մարդկանց միջև խոսքային փոխգործողություն է,
որի ընթացքում և որի միջոցով տեղի է ունենում.
առաջին՝
տեղեկատվություն, երկրորդ՝ գործունեության կառավարում,
երրորդ՝ հարաբերությունների հաստատում»:

Վ. Կ. Գյադչենկո

Այսօր տարրական դպրոցը զարգացման որակական փուլ է ապրում:Առաջին պլան են մղվել կրտսեր դպրոցականի անձի ձևավորումը, կայացումը, նրա գիտակցության ու կարողությունների զարգացումը:

Մայրենիի առարկայական չափորոշիչն ու ծրագիրը կարևորում են աշակերտի մտածողության զարգացումը խոսքային գործունեության ընթացքում, մասնավորապես հաղորդակցական կարողությունների ձևավորման գործում:Առարկայի նպատակը աշակերտների խոսքի և մտածողության զարգացումն է, լեզվի հաղորդակցական գործառույթի իրականացումը:

Հաղորդակցումը մանկավարժական գործընթացի կարևոր բաժիններից է: Մանկավարժական գործունեությունը կառուցվում է հաղորդակցման օրենքների հիման վրա: Մանկավարժական հաղորդակցումը ճիշտ ուսուցանող, դաստիարակող և զարգացնող նպատակ ունի:Այն ուղղված է հաղորդակցվող կողմերի զարգացմանը:Նրա բնույթը կարող է փոխվել՝ կախված հաղորդակցվողների տարիքից, դիրքորոշումներից, հաղորդակցման նպատակներից:

Այսօր մասնագիտական մանկավարժական գործունեության հիմնական բաղադրիչներից մեկը համարվում է հաղորդակցումը, որը հիմնավորվում է հետևյալ առանձնահատկություններով՝

▪ Հաղորդակցումը ուսումնադաստիարակչական խնդիրների լուծման կարևորագույն միջոցն է:

▪ Հաղորդակցման շնորհիվ ուսուցիչը ճանաչում է իր աշակերտներին ավելի մոտիկից, իր համար հստակեցնում է նրանց անհատականությունը, տեղեկություններ է ստանում նրանց միջանձնային հարաբերությունների, այս կամ այն արարքի մասին:

▪ Հաղորդակցումը կարգավորում է ուսուցչի և աշակերտի համատեղ գործունեությունը:

Կրտսեր դպրոցական տարիքը համարվում է ուսումնական գործունեության առավել պատասխանատու փուլ: Կրտսեր դպրոցական տարիքում առաջատար է դառնում նոր գիտելիքների, ունակությունների և հմտությունների ձեռքբերումը, ինտենսիվորեն զարգանում և փոխվում են ճանաչողական գործընթացները, հատկապես մտածողությունը և հաղորդակցման հնարավորությունները, հմտությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Վերջին տարիներին մի խումբ գիտաշխատողներ Ս.Պարնասի ղեկավարությամբ ուսուցման գործընթացում ստեղծագործական իրադրություն զարգացնելու նպատակով առաջարկում են օգնել աշակերտներին՝ ձեռք բերելու ինքնավստահություն, այսինքն շրջապատի հետ հարաբերությունները կառուցել այնպես, որ համարձակ արտահայտեն մտքերը՝ առանց երկար մտածելու: Աշակերտի կողմից մտածված յուրաքանչյուր խելացի դատողության համար պետք է քաջալերել նրան և մեծ տեղ տալ նրա ենթագիտակցությանը:

Ուսումնական նյութի ընկալմանն ու մշակմանը, մանավոր, կոնկրետ տպավորությունների ընդհանրացմանը նպաստող առավել հայտնի գաղափարի աղբյուրը Ջ. Բրուների ղեկավարությամբ իրականացրած հոգեբանամանկավարժական հետազոտություններն են: Մեր կրթական համակարգի նպատակներից մեկը հասարակության համար պիտանի, ինքնուրույն, ստեղծագործող, որոշումներ կայացնող, ճիշտ կողմնորոշվել և գործել կարողացող և իհարկե արդյունավետ հաղորդակցվող անհատ դաստիարակելն է:

Աշակերտի խոսքի հարստացման, զարգացման գործընթացի հիմքում ընկած են ուսումնական աշխատանքը ստեղծագործական դարձնող հնարներ: Երեխաների խոսքային գործունեության հիմնահարցերով զբաղվող Ա.Ա. Լեոնտևը գրում է.

«Որպեսզի մարդը լիարժեքորեն հաղորդակցվի, պետք է սկբունքորեն տիրապետի կարողությունների մի ամբողջ շարքի, առաջին՝ կարողանա արագորեն և ճշտությամբ կողմնորոշվել հաղորդակցման պայմաններում: Երկրորդ՝ գտնի հաղորդակցման համար անհրաժեշտ միջոցներ, երրորդ՝ կարողանա իր խոսքը ճիշտ պլանավորել, չորրորդ՝ կարողանա ապահովել ետադարձ կապ: Եթե նրանցից որևէ մեկը բացակայի, ապա խոսողին չի հաջողվի հասնել հաղորդակցման սպասվող արդյունքին»: [1]

Բենջամին Բլումը [2, էջ 167] (Միացյալ նահանգների ազգային մանկավարժական ակադեմիայի անդամ) գտնում է որ, ուսուցման մեջ գոյություն ունի վեց աստիճան՝ գիտելիք, իմաստավորում, կիրառում, վերլուծություն, կշռադատում և գնահատում: Նա գտնում է, որ ուսուցման ընթացքում աշակերտը ոչ միայն ձեռք է բերում գիտելիքների հանրագումար և մտապահում, այլև համադրում դրանք իր ունեցած գիտելիքների հետ (իմաստավորում), նոր գիտելիքները դարձնում է կիրառական, ապա գնում գիտելիքների խորացում (վերլուծություն, անալիզ), որին հաջորդումէ համադրման աստիճանը, երբ աշակերտը ընդլայնում է իր ունեցած գիտելիքը, համակարգում դրանք և որոշումներ կայացնում (գնահատում): Ուսուցման ողջ համակարգը Բլումը պատկերավոր կերպով համեմատում է սար մագլցելու հետ, ըստ որում մտապահումը նմանեցնում է գիտելիքների «սարի ստորոտին», իսկ գնահատումը՝ «գագաթին»:

Նման մոտեցումը ուսուցման գործընթացը կարող է դարձնել ավելի արդյունավետ, քանի որ այս դեպքում «կշռադատում» փուլը ճանաչվում է որպես ուսուցման առավել բարձր նպատակ:

Ուսուցիչն արդյունավետ հաղորդակցությունն այնպես պետք է կազմակերպի, որ միաժամանակ ԲՄ ուման շարժառիթներ ձևավորվի, ԲՄ խթանի աշակերտի ուսումնառությանը: Նրանց ակադեմիական աճը պայմանավորված է նրանով, թե որքանով է ուսուցիչը կարողանում կազմակերպել ուսումնական աշխատանքը՝ հենվելով աշակերտի հետաքրքրությունների, հնարավորությունների, օրտվածությունների և կարիքների վրա:Այս տեսակետից շատ օգտակար է Հովարդ Գարդների առաջարկած բազմաբնույթ մտածողության տեսության կիրառումը, որի ընթացքում ուսուցիչը ոչ միայն պատմում, բացատրում է դասը, այլև աշակերտին հարցեր է ուղղում, օգտագործում է զանազան պարագաներ, երաժշտություն, պատրաստում են իրեր, ճշտում նրանց ընկալման մակարդակը, յուրացման աստիճանը: Նա գտնում է, որ մարդուն հատուկ է մտածողության առնվազն յոթ ձև, որոնք ներկայացնելու համար օգտագործել է «ԲՄ-ի պիցա» իսկ տարրական դպրոցի համար՝«ԲՄ արև»: [3]

Մտածողության այս յոթ ձևերն ամբողջացնում են սովորողների կուտակած փորձը՝ հնարավորություն ստեղծելով ուսուցումը համապատասխանեցնել երեխայի հնարավորություններին և օգտագործել դրանք, որ սովորելը երեխայի համար դառնա մատչելի և հաճելի:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Հաղորդակցումը կրտսեր դպրոցական տարիքում

Մարդու համար ամենօրյա շփումը այլ մարդկանց հետ անհրաժեշտ է ինտելեկտուալ և բարոյական զարգացման համար: Սակայն միայն ֆիզիկական ու մտավոր կարողությունները բավարար չեն հաղորդակցման համար:Անհրաժեշտ է, որ երեխան ունենա հաղորդակցական պատրաստվածություն, այսինքն տիրապետի հաղորդակցման անհրաժեշտ կարողությունների և հմտությունների, ունենա հաղորդակցական ունակություններ և կարողանա հաղթահարել միջանձնային հաղորդակցման խոչընդոտները:

Հաճախ երեխան նախադպրոցական տարիքում չունենալով հաղորդակցական ունակություններ, դպրոցում պարզապես չի կարողանում ինքնադրսևորվել: Այս տեսանկյունից հաղորդակցական ակտիվության խթանման գործընթացում կարևոր նշանակություն ունի հաղորդակցական խոչընդոտների հաղթահարումը: Մանկավարժական հաղորդակցման մեջ արգելակաման հիմնական պատճառն ինքնավստահության պակասն է, որը հաղորդակցման կարողություններին ու հմտություններին ոչ բավարար տիրապետման հետևանք է:

Արգելակման հաջորդ հիմնական պատճառներից գնահատականի՝ թվանշանի գործոնը: տեղին է նշել, որ հաճախ գնահատականը անդրադառնում է նաև երեխայի ներընտանեկան միջանձնային հարաբերությունների վրա:

Մնացած խոչընդոտները պայմանավորված են հաղորդակիցների՝ մանկավարժի և համադասարանցիների հետ ունեցած փոխհարաբերություններով, թե որքանով են բավարարում երեխայի հետաքրքրությունները, զարգանում է հաղորդակցման պահանջմունքները:Այստեղ կարևոր նշանակություն ունեն մանկավարժի հաղորդակցական պատրատվածությունն ու գործիմացությունը:

Հաղորդակցումը պետք է կապված լինի երեխաների հետաքրքրությունների, հակումների, հնարավորությունների հետ:Միայն երեխայի հետաքրքրություններին համապատասխան և հույզերի հետ կապված ուսումնադաստիարակչական գործընթացը կարող է հաղթահարել երեխայի ձանձրույթը և ապահովել սուբյեկտիվության հավասար մակարդակներ բոլորի համար:

Այսպիսով հաղորդակցական ակտիվության խթանումը պայմանավորված է միջանձնային խոչընդոտների հաղթահարմամբ, երեխայի հաղորդակցական ունակությունների ձևավորմամբ և դրսևորմամբ:

Հաղորդակցական ունակությունները նպաստում են հաղորդակցական ակտիվության դրսևորմանը և հաղորդակցական որակի կատարեկագործմանը:Այսպես երեխան գիտակցում է իր դերը հաղորդակցման մեջ:Ձևավորվում է հաղորդակցունակ անձ որը տիրապետում է հաղորդակցական սկզբական ակտիվության:

Առաջին դասարանցիների և ուսուցչի հաղորդակցումը տեղի է ունենում գերիշխող դրական ֆոնի վրա: I դասարանցիների մեծամասնությունը դրական է վերաբերվում ուսուցչին և անվերապահորեն ճանաչում է ուսուցչի հեղինակությունը: Ուսուցչի հետ հաղորդակցումը մեծ ազդեցություն է թողնում կրտսեր դպրոցականի վրա:

Ուսուցիչը կարող է օգնել երեխային հաղթահարել խնդիրներն ու դժվարությունները, բայց կարող է նաև իր շփոթված ռեակցիաների շնորհիվ ավելի խորացնել խնդիրը:Կարելի է ասել, եթե երեխան վստահելի հարաբերություններ ունի ուսուցչի հետ, ապա խնդիրները հեշտ կլուծվեն:

Ընդհանուր առմամբ տարրական դպրոցի ուսուցիչը իր հեղինակության շնորհիվ մեծ ազդեցություն ունի կրտսեր դպրոցականի անհատականության ձևավորման վրա: Հատկապես եթե մանկավարժը չի կարողանում կողմնորոշվել և նպաստել նրա հաղորդակցական ունակությունների կառուցողական ինքնակազմակերպմանը, ապա հետագայում, երբ երեխան իր հետաքրքրությունները սկսում է փնտրել դպրոցից և ընտանիքից դուրս, նա դառնում է անկառավարելի:

Հենց ընտանիքն ու ուսուցիչը պիտի օգնեն կրտսեր դպրոցականին, որ նա կարողանա կատարել իր առջև դրված պահանջները և ընդունել դրանք: Ե.Ե. Սապագովան նշում է, որ կրտսեր դպրոցականների ուսումնական գործունեության առանձնահատկությունները ստեղծում են հաղորդակցական կարողությունների ձևավորման համար պայմաններ: Այլ կերպ ասած ուսումնական գործունեությունը «շրջում է երեխային իր վրա», պահանջում է ռեֆլեքսիա՝ «ինչպիսին եմ եղել», «ինչպիսին եմ դարձել» հարցերի գնահատականը:

Ուսումնական գործունեությունը սկսվում է այն ժամանակ, երբ աշակերտը կարողանում է ինքնագնահատել [14, էջ 36]:

Երեխաների մեջ ինքնուրույնություն զարգացնելու նպատակով անհրաժեշտ է նրան հանձնարարել գործեր, որպեսզի կատարեն ինքնուրույն: Երբ երեխան դպրոց է հաճախում, աստիճանաբար մեծանում է շփման ոլորտը, որի արդյունքում փոխվում է հաղորդկացման բովանդակությունը: Հաղորդակցման բովանդակությունն առանձնանում է մեծահասակների հետ գործնական շփմամբ: Դպրոցը երեխայի առջև դնում է պարտականություններ՝ կապված խոսքի զարգացման հետ: Երեխայի հաղորդակցական կարողությունների ձևավորումը տեղի է ունենում լեզվի միջոցների ակտիվացման շնորհիվ:

Հաղորդակցումը միջոց է, որի ճիշտ կազմակերպման շնորհիվ ավանդական ուսուցման «սուբյեկ-օբյեկտ» մոդելը վերածվել է «սուբյեկտ-սուբյեկտ» մոդելի, որի երկու կողմերն էլ միաժամանակ և՛ սովորող են, և՛ սովորեցնող: Այսպիսի իրավիճակում որքան բարձր է մանկավարժիմասնագիտական կուլտուրան, այնքան ավելի բարձր է այդ երկխոսության արդյունքը: Մանկավարժական կուլտուրայի կարևոր բաղադրիչներից են մասնագիտական գիտելիքները, զգացմունքները, մանկավարժական մտածողությունը, ստեղծագործական գործունեությունը և մանկավարժական վարպետությունը: Ներկայումս տարբերակվում են անձի կուլտուրայի երկու հիմնական մակարդակ՝

ա) *ներքին՝ հոգևոր կուլտուրա , որը մարդու հոգևոր արժեքների հանրագումարն է, նրա զգացմունքների , գիտելիքների, գաղափարների, համոզմունքների, բարոյական սկզբունքների, սեփական արժանապատվության ընկալումը:*

բ) *արտաքին շփման ընթացքում արտաքին տեսքի, վարքի կուլտուրա, որը ներքին կուլտուրայի արտաքին դրսևորման ձևն է:*

Աշակերտի համար բազմաբնույթ մտածողության ուսուցումն ունի միշարք առավելություններ, որոնցից մեկն է հաղորդակցկական դրական մթնոլորտը, որն ապահովում է ուսումնական աշխատանքի արդյունավետությունը և՛ աշակերտների, և՛ ուսուցիչների համար: Մտածողության այս ձևը լեզվական (խոսքային) մտածողությունն է, որը ենթադրում է խոսքը, լեզուն՝ որպես միտք արտահայտելու, ինչպես նաև ուրիշներին հասկանալու և հաղորդակցվելու միջոց օգտագործելու կարողություն:

Մեկը հաղորդում է, այսինքն մեկն արտահայոտում է իր միտքը, իսկ մյուսն ընդունում է այն: Այս ընթացքում առաջինի խնդիրն է որոշել, թե ինչ է ուզում ասել, ճիշտ ձևակերպել միտքը: Խոսակցի խնդիրը հակադարձ է. ընկալել բառերը և հասկանալ զրուցակցին: Նշված հատկանիշը խոսքային գործունեության ուղղվածությունն է«մտքից դեպի բառը» կամ «բառից դեպի միտքը»[19]:

<u>Արդյունավետ հաղորդակցվել նշանակում է՝</u>

ա) Գաղափարները հստակորեն արտահատել: Հստակ և արդյունավետ հաղորդել գլխավոր միտքը և մանրամասնելով ապացույցներ բերել:

բ) Արդյունավետորեն հաղորդակցվել զանազան խմբերի հետ: Տեղեկությունն այնպիսի ոճով և երանգավորմամբ ներկայացնել, որն արդյունավետ համընկնում է խմբի նախասիրությունների, գիտելիքների կամ ըմբռնումների մակարդակին:

գ) Արդյունավետ հաղորդակցվել զանազան ձևերով: Կիրառել հաղորդակցության բազմաբնույթ մեթոդներ՝ դրանց որոշ պայմանականություններն ու կանոնները կիրառելով բավական բարձր ստեղծագործական և երևակայական ձևերով:

դ) Արդյունավետ հաղորդակցվել զանազան նպատակներով: Հստակորեն հաղորդել նպատակը, ստեղծագործական և խորաթափանց ձևով:

ե) Տալ այնպիսի արդյունք, որը գերազանցի պայմանական չափորոշիչները:

զ) Ցուցաբերել արդյունավետ միջանձնային ունակություններ: Խմբում արդյունավետ փոխազդեցություն խթանել և տեսակետներն ու կարծիքներն այնպես արտահայտել, որ ուշադրություն ցուցաբերի մյուսների զգացմունքների և գիտելիքների նկատմամբ:

է) Գիտակցել սեփական մտածողությունը: Մանրամասն ներկայացնել մտքերի այն հաջորդականությունը, որն օգտագործում է ինչ-որ առաջադրանք կատարելիս:

ը) Արդյունավետ պլաններ կազմել: Հստակ, որոշակի նպատակ սահմանել:Հաշվի առնել և իրականացնել դրա հետ կապված բոլոր ենթանպատակները:Մշակել և հավատարիմ մնալ մանրամասն ժամանակային պլանավորմանը:

թ) Գնահատել սեփական գործողությունների արդյունավետությունը:Լինել ուշադիր հետադարձ կապի բոլոր տեսակների նկատմամբ:Խորհուրդներ և պատասխաններ որոնել՝օգտվելով համապատասխան գիտակ աղբյուրներից:

ժ) Ճշգրտություն փնտրել:Անհրաժեշտության դեպքում հատուկ ուշադրություն դարձնել մանրամասների վրա:Ստուգել հանձնարարված բոլոր կարևոր աղբյուրները:Արագորեն գտնել անճշտությունները և այնպես ուղղել դրանք, որ լրացուցիչ պարզություն հաղորդիս ամբողջ առաջադրանքին:

ժա) Նրբանկատ լինել ուրիշների զգացմունքների, ապրումների և գիտելիքների մակարդակի հանդեպ:Նպաստել մարդկանց անհատական տարբերությունների և զգացողությունների նկատմամբ հարգանքի դրսևորմանը:

ժբ) Ստեղծել գնահատման սեփական չափորոշիչներ, հիմնավորել և պահպանել դրանք:

Խոսելով ուսուցման կարևորության մասին մանկավարժ-տեսաբան Վ.Գյաղչենկոն ասում է.

«Ուսուցումը դիտվում է որպես մարդկանց միջև հատուկ ձևով կազմակերպված հաղորդակցություն, որի ընթացքում վերարտադրվում և յորացվում են հասարակական-պատմական փորձը, մարդկային գործունեության բոլոր ձևերը» [19]:

Այս ամենի արդյունքում հարկավոր է հասնել նրան, որ աշակերտը գիտակցի, թե յուրաքանչյուր մարդու կյանքում որքան կարևոր են շփումն ու հաղորդակցումը, որևէ լավ լուր հայտնելը, զրուցելը, հետաքրքիր բաներ պատմելը, հումորով խոսելը, որևէ առիթով ջերմ խոսքեր ասելը, վեճի ժամանակ խոսքով պաշտպանվելը, վեճը խոսքով վարպետորեն հարթելը:

<u>Ճիշտ կազմակերպված մանկավարժական հաղորդակցումը նպաստում է՝</u>

ա) երեխաների ճանաչողական զարգացմանը

բ) տեղեկությունների փոխանակմանը

գ) գործունեության կազմակերպմանը

դ) ինքնագնահատմանը

ե) սոցիալական դերի փոխանակմանը

զ) աշակերտակենտրոն դասարանի ստեղծմանը

Աշակերտակենտրոն դասարանի ստեղծումը պահանջում է ուսումնական ծրագրի ընդլայնված հասկացության կիրառում:Ավանդական դասարանում ուսուցիչը մատուցում է միայն ուսումնական ծրագրով պահանջվող նյութի բովանդակությունը և ձևավորում համապատասխան հմտություններ, իսկ երեխաների անհատական տարբերությունները հաշվի չեն առնվում:Մինչդեռ աշակերտակենտրոն դասարանում ուսուցիչը հեշտացնում է աշակերտների ուսումնառությունը՝ հիմնվելով նրանց կարծիքների ու հետաքրքրությունների վրա:Նա օգնում է աշակերտին յուրացնել ուսումնական ծրագրի բովանդակությունը և հմտություններ ձեռք բերել իրենց զարգացման մակարդակին, անհատական հետաքրքրություններին և սովորելու ոճին համապատասխան ճանապարհներով:

Աշակերտակենտրոն դասարաններում երեխաները սվորում են ուսումնական ծրագրով նախատեսված նյութը, ձեռք են բերում հմտություններ՝ միաժամանակ զարգանում են որպես անհատներ:

«Ուսուցչի աշխատանքը, անտարակույս» ուսուցողական, դաստիարակչական հզոր ուժ է: Սակայն այդ ուժն անարդյունավետ և անօգտակար կլինի, եթե երեխայի սրտին չդիպչի կրթության և դաստիարակության ամենանուրբ գործիքը՝ խոսքը» [20, էջ 216]:

Իրոք, բնության գաղտնիքների մեջ թափանցելու, ժողովրդի պատմությունն իմանալու լավագույնմիջոցը մայրենի լեզուն է, որը խոսքի միջոցո կատարում է համապատասխան հաղորդակցման դերը:

Երեխաիի խոսքի զարգացման, հաղորդակցման կարողության զարգացման մեջ հստակ որոշակիություն է ստանում կարդալու ուղղությամբ պարապմունքը, եթե այն ընդգրկվում է տարրական դպրոցի կենտրոնական ուսումնական առարկայի՝ «Մաայրենի լեզվի» համակարգի մեջ:Ընթերցանությունն անմիջականորեն ազդում է արտասանական կարողությունների ու հմտությունների ձևավորման ընթացքի, բանավոր ու գրավոր խոսքի զարգացման վրա:Մանկավարժական գիտությունների դոկտոր Ջ.Գյուլամիրյանն իրավացիորեն մեծ տեղ է տվել հասկանալով կարդալուն՝ ասելով.

«Բնագրի դյուրին և հասկանալով կարդալու հետ անմիջականորեն կապված են .

1. Նախադասության կազմի մեջ մտնող բառերի երկարությունը:Գիտությունն ապացուցել է, որ կարճ բառերով (մինչև 4-5 բառ) և ոչ մեծ նախադասություններով բնագրերը կրտսեր դպրոցականներն ավելի սիրով են կարդում:
2. Բնագրի դյուրին ընթերցումը կախված է նրա մեջ օգտագործված բառերի՝ աշակերտներին ծանոթ լինելու աստիճանից, նաև բառապաշարի բարդությունից:
3. Շարադրման որճը, հետաքրքրաշարժության աստիճանը, դերաբաշխումն օգնում են ընթերցողին արագորեն հաղթահարել տեքստի ընթերցման հետ կապված դժվարությունները և հեշտ յուրացնել [27, էջ 31]:

Խոսքային վարժությունների կարևոր աղբյուր են նաև դիտումները, որոնք հաճախ ենթադրում են առարկաների կամ երևույթների էական հատկանիշների առանձնացում, նրանց համեմատության և հակադրության ուղղությամբ կատարվող աշխատանքները:Սրանք կատարելիս կարող ենք օգտագործեկ նկարներ, ընթերցած բնագրեր, քերականական, ուղագրական կարևոր նյութեր և այլն:

Ամփոփ խոսք կառուցելու համար առանձնապես կարևոր է տիրապետել միտքն ամփոփելու, հետևություն անելու կարողությանը, պատճառահետևանային կապերի բառային արտահայտմանը, որոնք բարձրացնում են աշակերտների խոսքի մշակույթի մակարդակը, խոսքը դարձնում տրամաբանական:

«Հետևողականորեն զարգացնել ու կատարելագործել երեխաների բանավոր ու գրավոր խոսքը թե՛ ուսուցվող լեզվական և թե՛ գրական-գեղարվեստական նյութի հիման վրա:

Լեզվական նյութը ծառայեցնել ճիշտ խոսք ստեղծելուն», - ասվում է հայոց լեզվի ծրագրում [28]:

Խորհուրդներ, երբ աշակերտը դժվարանում է կարդալ

▪ Ձույգերով կարդալու հնարավորություն տալ:
▪ Կիրառել դասընկերների դտողությունները:
▪ Օգտագործել ձայնագրած նյութեր, տեսաժապավեններ:
▪ Թույլ տալ ցածրաձայն կարդալ:
▪ Ամփոփել հիմնական դրույթները և աշակերտին հանձնարարել ինքնուրույն ամփոփել:
▪ Հաջորդականությամբ դասավանդել հիմնական դրույթները:
▪ Պարզել հիմնական գաղափարները:
▪ Կազմել ո՞վ, ի՞նչը, ե՞րբ, որտե՞ղ բառերով սկսվող հինգ հատուկ հարց:
▪ Թույլ տալ տետրում ընդգծել պարբերությունները, հիմնական բառերը կամ գաղափարները:
▪ Հնարավորություն տալ մտքի մեջ ընթերցել:
▪Նախօրոք սովորել և ամրապնդել հիմնական գաղափարները:

Խորհուրդներ, երբ աշակերտը դժվարանում է խոսել

▪ Առաջարկեք նախադասության սկիզբը:
▪ Կիրառեք տեսողական նյութեր:
▪ Պատասխանների համար մտածելու լրացուցիչ ժամանակ տվեք:
▪ Սկզբում տվեք աշակերտի անունը, հետո՝ հարցը:
▪ Հանձնարարեք խմբակային ընթերցումներ կամ զրույցներ:
▪ Օգտագործեք ռիթմ կամ երաժշտություն:
▪ Խոսելու համար գրաձնական հնարավորություններ ստեղծեք:

Մ.Նալբանդյանն ասել է. «Գրելը սովորեցնում է ճշտություն, կարդալը հարստացնում է մարդու միտքը, իսկ խոսելու մեջ վարժվելը հաջողագյուտ է անում նրան»:

Կրտսեր դպրոցի խնդիրն էօգնել երեխային հաղորդակցվել, բանավոր խոսքը ճիշտ ձևակերպել, կարողանալ արտահայտել իր զագցմունքներն ու հույզերը: Կրստեր դպրոցի խնդիրն է նաև մայրենի լեզվի խոսքային հմտությունների և հաղորդակցական կարողությունների զարգացումը:Այդ է պատճառը, որ տարրական դասարաններում մայրենիին հատկացված ժամաքանակից, իբրև անհրաժեշտ բաղադրիչ, շաբաթական ժամերից մեկը հատկացվում աշակերտի խոսքային կարողությունների զարգացման խնդիրներին՝ բաղադրիչն անվանելով «Խոսք և հաղորդակցություն»:

Գրաճանաչության դեռևս նախաայբբենական փուլից սովորողների խոսքի և հաղորդակցման խնդրի պատշաճ կարևորության ընդունումը մանկավարժներիս մղում է փնտրտուքի և արդյունքում ստեղծվում է բազում հնարների, մեթոդների մի ամբողջ զինանոց:

Խոսքային վարժությունների կարևոր աղբյուր են դիտումները, որոնք հաճախ ենթադրում են առարկաների կամ երևույթների էական և ոչ էական հատկանիշների առանձնացում, նրանց համեմատության և հակադրության ուղղությամբ կատարվող աշխատանքները:Սրանք կատարելիս կարող ենք օգտագործել նաև նկարները, ընթերցած բնագրեր, քերականական, ուղղագրական նյութեր և այլն: Ամփոփ խոսք կառուցելու համար առանձնապես կարևոր է տիրապետել միտքն ամփոփելու, հետևություն անելու կարողությանը, պատճառահետևանքային կապերի բառային արտահայտմանը, որոնք բարձրացնում են աշակերտի խոսքի մշակույթի մակարդակը, խոսքը դարձնում տրամաբանական: «Հետևողականորեն զարգացնել ու կատարելագործել երեխաների բանավոր խոսքը թե ուսուցվող լեզվական և թե գրական-գեղարվեստական նյութերի հիման վրա: Լեզվական նյութը ծառայեցնել ճիշտ խոսք ստեղծելուն»,- ասվում է հայոց լեզվի ծրագրում [28]:

Որպեսզի աշակերտները կարողանան ճշտորեն ընտրել իրավիճակի համար անհրաժեշտ խոսքային միջոցներ, կողմնորոշվել իրադրություններում, ճիշտ որոշել հաղորդակցման նպատակը, մշակել կարողություններ, ես պարբերաբար նախատեսում եմ հատուկ առաջադրանքներ՝ օգտագործելով արդյունավետ և առաջադեմ շատ մեթոդներ:

Ինչպես ցույց են տալիս գործնականում կատարված մի շարք դասընթացներ, հաղորդակցման զարգացմանն ուղղված մեթոդներից կրտսեր դպրոցականների շրջանում առավել արդյունավետ են զրույց-քննարկումները:

Կարևորելով հաղորդակցական կարողությունների զարգացումը կրտսեր դպրոցականների մոտ, փորձել եմ հետազոտություն իրականացնել IV դասարանում, մայրենիի դասաժամին: Դասի նպատակն էր ճիշտ, հասկանալով ընթերցել ստեղծագործությունը, կարողանալ ստեղծագործաբար վերարտադրել տեքստը և հանդես գալ սեփական դատողություններով:

Նախատեսված հետազոտությունը իրականացրել եմ երկու իրար հաջորդող դասաժամերի ընթացքում: Առաջին դասաժամին փորձել եմ կիրառել «հարց-պատասխան» մեթոդը:Տեքստն ընթերցելուց հետո աշակերտներին բաժանել եմ քարտեր՝ նախապես գրված հարցերով: Քարտերը լրացնելուց հետո յուրաքանչյուր աշակերտ ներկայացնում է իր տեսակետը, թե որն է ընտանիքի հիմքը:

Վերլուծության արդյունքում պարզվեց, որ ոչ բոլոր աշակերտներն են կարողանում որևէ հարցի շուրջ խոսել, կարծիք հայտնել, մեկնաբանություններ, դատողություններ անել:

Երկրորդ դասաժամի ընթացքում օգտագործել եմ «Անընդհատ զրույց զույգերով» մեթոդը:

Անընդհատ զրույց զույգերով

Այս մեթոդն օգնում է խոսքի զարգացմանը, նպաստում է իմացածի ամփոփմանը, կարդացածի յուրացմանն ու ներկայացմանը:

1. Աշակերտները զույգեր են կազմում, յուրաքանչյուր զույգի անդամներ դառնում են հաղորդակցվող գործընկերներ:Նրանցից առաջինը սկսում է շարադրել, պատմել արդեն կարդացած հատվածից, նա 60 վայրկյան անընդհատ պատմում է, իսկ մյուս գործընկերը ուշադիր լսում է:Ժամանակը լրանալուց հետո հայտարարում եմ՝ «Անջատվեք», գործընկերներն անմիջապես դերերով փոխվում են, բայց պայմանով, որ երկրորդ գործընկերը շարունակի մյուսի խոսքը՝ չկրկնելով գործընկերոջ ասածները:
2. Երկրորդ մասնակիցն էլ է խոսում 60 վայրկյան, հանձնարարում եմ նորից զույգերով փոխվեն:Սական այս անգամ պիտի խոսեն 40 վայրկյան՝ դարձյալ չկրկնելով ոչ մի փաստ:
3. Չկրկնելու այս կանոնն աշակերտին ստիպում է ավելի խորանալ տեղեկատվության մեջ և ավելի ուշադիր լսել ընկերոջը:

Ներկայացնելու համար տրվող ժամանակը փոխում եմ՝ ըստ անհրաժեշտության: Ամփոփումն ավարտելուց հետո անդրադառնում եմ անհասկանալի հատվածների քննարկմանը, պարզաբանմանը:

Մի քանի աշակերտի առաջարկում եմ կանոնավոր ընդմիջումներով ոտքի կանգնել և ընկերոջ հետ հանառոտ ամփոփել այն, ինչը այդ պահին սովորեցին:

Դասի վերջում կարդացի օրվա դասի հասկացությունների ձևակերպումները, ըստ իրենց վերաբերմունքի աշակերտները պատասխանեցին հարցերին՝ հիմնավորելով իրենց կարծիքները:

Ամփոփման արդյունքում պարզ դարձավ, որ բոլորն են մասնակցում դասապրոցեսին:Զույգերով զրույցի դեպքում աշակերտն ավելի ինքնավստահ է լինում:Հետազոտությանս արդյունքում համոզվեցի, որ այս հնարն օգնում է խոսքի զարգացմանը, նպաստում է իմացածի ամփոփմանը, կարդացածի յուրացմանը:

<u>Մանկավարժության մեջ ընդունված է դիտարկել ուսուցման երեք հիմնական ձևեր</u>

- դոգմատիկ կամ սերտողական
- բացատրական և ակտիվ
- զարգացնող ուսուցում

Առաջին երկու ձևերն այսօր ընդունված է անվանել ավանդական, որի նպատակն է՝ գիտելիքների հաղորդում, կարողությունների և հմտությունների ձևավորում: Այս դեպքում աշակերտի զարգացումը դառնում է ուսուցման ածանցված, հատուկ չպլանավորված արդյունք: Իսկ երրորդը անվանում են նորացված (իննովացիոն) ձև, որի և՛ ռազմավարությունը, և՛ մարտավարությունն ուղղվում են աշակերտի ներուժի բացահայտմանն ու զարգացմանը: Ուսուցման այս ձևը չի ենթադրում ավանդական ձևի մերժում: Ուղղակի ավանդականի նպատակը դառնում է ուսուցման նպատակին հասնելու միջոց: Այսպիսով արդի ուսուցման հիմնական խնդիրներն են՝

- *հաղորդել որոշակի գիտելիքների հանրագումար*
- *ձևավորել այդ գիտելիքները կիրառելու կարողություններ*
- *սովորել սովորեցնել*
- *ձևավորել ստեղծագործական մտածողություն, նորը ստեղծելու կարողություն*

Հայոց լեզվի ուսուցման գործընթացի կարևոր խնդիրներից մեկը աշակերտի խոսքի զարգացումն է, որը նպաստում է ստեղծագործական իրադրության ապահովմանը:

Աշակերտի խոսքի հարստացման, զարգացման գործընթացի հիմքում ընկած են ուսումնական աշխատանքը ստեղծագործական դարձնող հնարներ: Երեխաների խոսքային գործունեության հիմնահարցերով Ա.Ա.Լեոնտևը գրում է. «Որպեսզի մարդը լիարժեքորեն հաղորդակցվի, պետք է սկզբունքորեն տիրապետի կարողությունների մի ամբողջ շարքի. առաջին՝ կարողան արագորեն և ճշտությամբ կողմնորոշվել հաղորդակցման պայմաններում: Երկրորդ՝ գտնի հաղորդակցման համար անհրաժեշտ միջոցներ: Երրորդ՝ կարողանա իր խոսքը ճիշտ պլանավորել: Չորրորդ՝ կարողանա ապահովել ետադարձ կապ:Եթե սրանցից մեկը բացակայի, ապա խոսողին չի հաջողվի հասնել հաղորդակցման սպասվող արդյունքին»:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

Մասնագիտական գրականության վերլուծության արդյունքում ստացված տվյալների հիման վրա եկա այն եզրակացության, որ՝

- կրտսեր դպրոցական տարիքը ստեղծում է մեծ հնարավորություններ անձի բարոյական որակների և դրական գծերի ձևավորման համար
- հաղորդակցումը մարդու փոխներգործելու կարողությունն է այլ մարդու եհտ
- հաղորդակցումը ինքնին հանդիսանում է աշակերտի բազային հատկանիշներից մեկը, որը մի կողմից ապահովում է ուսման մեջ հաղորդակցման գործընթացի արդյունավետ ընթացքը, իսկ մյուս կողմից՝ ձևավորվում և հղկվում է արդյունավետ ուսումնական գործընթացի ընթացքում
- հաղորդակցման գործընթացի առավել արդյունավետ շրջան է համարվում դպրոցական տարիքը
- հաղորդակցումը մեծ նշանակություն ունի կրտսեր դպրոցականի բարոյական վարքի կայացման գործում
- կրտսեր դպրոցական տարիքում հաղորդակցումը մեծ ազդցություն ունի կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի, ինքնահաստատման գործում:

Մայրենիի առարկայական չափորոշիչն ու ծրագիրը կարևոր են աշակերտի խոսքի և մտածողության զարգացման, մասնավորապես հաղորդակցման կարողությունների ձևավորման խնդիրներում: Կապակցված խոսքի կառուցման հնտությունների ձևավորումը, բառապաշարի հարստացումը, աշակերտի խոսքի լեզվաքերականական կառուցվածքի մշակումը պետք է ծառայեն այս գլխավոր նպատակին՝ մայրենիով գրագետ և արդյունավետ հաղորդակցվելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը: Այս ժամերի արդյունավետ կազմակերպումը կնպաստի հաջողությամբ իրականացնել լեզվի ուսուցման հաղորդակցական և գործառութային մոտեցումը և կնպաստի աշակերտի մտածողության և խոսքի արդյունավետ զարգացմանը:

Մայրենիի առարկայական ծրագրերի ժամանակակից ուղղվածությունը աշակերտի խոսքային զարգացման հարցերում մղում են մեթոդական նոր որոնումների: Խոսքի զարգացումը, ներառյալ բարեկիրթ խոսքի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքը, լրացվում է մեկ այլ խնդրով. ձևավորել այնպիսի անձ, որը տիրապետելով որոշակի բովանդակային նյութի, տեղեկատվության, կարողանա ճիշտ կողմնորոշվել կոնկրետ խոսքային իրադրության մեջ, իր խոսքը կառուցելով այդ իրադրությանը համապատասխան:

Այսինքն՝ արդյունավետ հաղորդակցվելու խոսքային գործունեության ընթացքում զարգանում է նաևերեխայի մտածողությունը:

Անհրաժեշտ է աշակերտի մեջ նպատակասլաց կերպով մշակել ուրիշի մտքերը ընկալելու ունակություն՝ այսինքն հանդես գալ ոչ միայն որպես խոսող, այլև ունկնդիր, ընկալող, խոսքի հասցեատեր: Խոսքային վարքը կարող է շատ բան ասել, շփվողների, նրանց կրթության, դաստիարակվածության մասին: Արդյունավետ շփվելու համար սովորողը պետք է ծանոթ լինի հաղորդակցական իրավիճակներին, իսկ յուրաքանչյուր ուսուցիչ պարտավոր է ծավալել բարձրարժեք գործունեություն: Ուսուցչից ակնկալվում է, որ հետևողական և նպատակասլաց ջանքերի արդյունքում տարրական դպրոցն ավարտողը պետք է կարողանա՝

- ընկալել ուրիշի խոսքը, արտահայտել սեփական մտքերը, հաղորդակցվցել տարբեր իրավիճակներում
- կարդալ և հասկանալ գրավոր պարզ տեքստը, տրամաբանական եզրակացություններ անել
- կարողանալ աշխատել համագործակցված, լինել նախաձեռնող
- սովորել և սովորեցնել, տիրապետել սովորելու հիմնական հմտություններին
- ունենալ համարժեք ինքնագնահատական

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գ.Թերզյան, Կ.Թորոսյան, Հ.Խաչատրյան «Խոսք և հաղորդակցություն»
2. Գ.Թերզյան, Կ.Թորոսյան, Հ.Խաչատրյան «Խոսք և հաղորդակցություն» մեթոդական ձեռնարկ
3. Հայոց լեզու և գրականություն, հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական չափորոշիչներ և ծրագրեր
4. Խաչատրյան Ս.Գ. «Ուսուցման մեթոդներ», ՀՀԳ. ազգային ակադեմիա, Շիրակի հայագիտական կենտրոն , Գիտական աշխատություններ, VII, Գյումրի 2004